

կատարում: Աստուծոյ կամքն իմանալն և ամեն միջոցներ ունենալը փրկուելու համար ու գոհ լինել միայն, որ մենք բարի գործ չենք կատարում, — աստուածային շնորհքը չտեսնել չէ՞ արդեօք:

Ինչո՞ւ համար ենք քրիստոնեայ անունը կրում: Միթէ նորա համար, որ քրիստոնէական ճշմարտութիւններ բաւական գիտենք: Ո՛չ. այն ծառան, որ գիտէ իւր տիրոջ կամքը ու չէ կատարել, շահ չէ՞ իր: Ի՞նչպէս պէտք է ներկայանանք միւս կեանքում մեր գլխումն ունեցած ցնորքներով, ու մեր մէջ ունեցած այլանդակ դատարկութիւնովն:

Ո՛վ Տէր, տո՛ւր մեզ այն շնորհքն, որ ոչ միայն մեր խելքով, այլև՝ մեր ամբողջ հոգւով, մեր բոլոր կեանքով մօտենանք Քեզ, — մոռանալով այն ամեն երկրաւոր մեզ հաճոյ բանն, այն ամեն բանն, ինչ որ թանգ է մեր հոգւոյ հակմանց համար, ուրանալով մեր անձը, գալ Քեզ մօտ մինչև երկնային Երուսաղէմն, ինչպէս արեւելքի իմաստունները Քեզ համար եկան երկրաւոր Երուսաղէմ: Ամէն:

Թարգմ. Յ. Տ. Յ.

ՄԵԶԱՆԻՑ ԱՌԱՋ ԵՂԱԾ ՄԱՐԴՈՅ ՈՒ ՄԵՐ ՊԱՊԵՐԻ ԳՈՐԾԵՐՆ.

Ա.ՊԵՐ. Ա. 24, 25:

Երբոր ես իմ իսկական հայրենիքս վերադառնալու ցաւը սրտումս յուզուած, հին ժամանակուայ մօտիկ բարեկամներին տեսութիւն գնալ եմ ուզում, իմ ճանապարհս դուրս է տանում ինձ անձայն, մենսկ, առանց մի ընկերի՝ հանգստարանի արտասուաց հովիտն: Այստեղ ձայն չի լսվում ամենեւին. կեանքի նշան չկայ. ամենքն էլ վաղուց գնացել են յաւիտենական հանգիստը. միայն գարնանը ծաղկած թարմ վարդերը նրանց գերեզմանների վրայից կամացուկ ինձ ողջուենում են: Մեծ քամիներով եկած յորդահոս անձրևներից, մարմարեայ մահարձանների ու տապանաքարերի վրայ գրուած իմ սրտիս թանկագին անունները հազիւ են կարդացվում: Թէ ինչ կեանք են ունե-

ցել նրանք, ինչ նշանակութիւն են ունեցել աշխարհիս համար, շուտով ընդ միշտ կմոռացուի: Այն ժամանակ մահը գերազոյն իշխանութիւն կբանեցնի՝ արդեօք, և ազնիւ պատերազմողներին քաշած նեղութիւնները կամ չարչարանքները զ՞ուր անցկացած կլինին: — Բայց չէ՛. ինչ համար մի միտթարութիւն մնացած է, որ Աստուծոյ վարդերը գերեզմանի վրա՛ն էլ են բացվում:

Ի՞նչ ես դողում երկիւղիցդ, ո՛վ իմ հոգի՝ աշխարհիս մէջ իշխանութիւն ունեցողներից, անխղճմտանք մարդոց քեզ համար արած չար խորհուրդներից ու սանձարձակ կրքերի փութորիկներից: — Միթէ էլ չկայ Աստուած: Ել չկայ միակ Տէրն, Որինն է ամեն բան: Որ ամեն բան անօրինել է իւր խորհրդով, Որ աշխարհիս ամենազօրաւորին էլ իւր սահմանն է դնում: — Միթէ մինչև ցայժմ չէ՞ յայտնել քեզ իւր միապետական ամենիշխան ամենակարողութիւնը: Միթէ յայտնի չէ իրան՝ ինչ նշանակութիւն ունի այն խօսքը թէ՛ մարդուս իւր սրտումն դրածն Աստուած պէտք է յաջողի:

Մի վախենար, մի դողար աշխարհիս մարդկանցից, ոչ էլ քեզ համար սարքած բաներից այն մարդոց, որոնք որ իշխանութիւն ունեցողներ են երևում: Տես, թէ որչափ նշանակութիւն ունի նրանց գործն, որ այսօրուան օրս իրանց արածը՝ վաղը չկայ: Նրանց մտածած, հնարած ամենավատ բանից՝ միշտ լաւը պէտք է դուրս գայ, որ չէին ուզիլ: Գիշերուայ մութից, չէ՞ որ միշտ օրուայ լոյսն է առաջ գալի: Միայն Բայրի Բանն է Քա՛մ, ինչու որ Աստուած այնպէս է կամենում. սորա համար ամեն տեղ քանգած, կործանուած բանի փլատակներից յաղթով կերպով բարլի՛ն է բարձրանում: Երջանկութեան տաճարն, Աստուծոյ արքայութիւնը պէտք է աշխարհիս վրայ աճի: Այս մեծ շինութիւնն օրից օր պէտք է տարածուի: Մահկանացու մարդոց անմրտութիւնն ու իմաստութիւնն այդ բանին պէտք է օգնի, առաջ տանի: Մի վախենար մտածելով թէ՛ որչափ որ առաջ գնայ Աստուծոյ շննքն, այնչափ էլ գործաւորների շէնքի շուրջը կապած փայտեղէն պարագայքն և ուրիշ կարևոր գործիքները՝

քանի կերթան, այնքան աւելի պէտք չեն գալ, ու տաճարը կը կործանուի:

Ժամանակը՝ ջրի մի գնացք, մի հեղեղ է, որոյ մէջ միշտ նոր ալիքներ են բարձրանում ու միշտ էլի փշրվում ու ցրվում: Պէտք է ամեն բան անց կենայ, ոչնչանայ պէտք է միշտ նորը գայ՝ ու էլի հնանայ, որ կարողանաս հասկանալ թէ ինչն է անկայունն ու անցաւորն՝ և ինչն է մնայունն՝ յաւիտենականն: Ով որ պատահած բաների փոփոխութեան մէջ՝ մնայուն ճշմարիտն, — ով որ ուրախութեան ու տրտմութիւնների փոփոխութեան մէջ՝ մնայուն ճշմարտութիւնը ճանաչել է ու հասկացել, այդպիսի մարդն իմաստուն Կառնալու ճանապարհի մէջն է: Եւ իմաստուն մարդ Կարնալ է, հէնց որ միայն ճայտան ճշմարտութիւնն իւր միակ բարիքն է դարձել, ու միայն ճայտան զուարճութիւնն՝ իւր միակ փափագն:

Եւ ինչպէս շուտ է անհետանում իշխանութիւն ունեցողների մեծութիւնն ինչպէս ունայն է նրանց ձգտումը, ջանքը, բան տեսնելն ու գործ կատարելն: Աշխարհիս փայլը վերջապէս ոչինչ է դառնում, այն ոչինչն, որ մոլորացկան աղքատը հետն է տանում հողի տակ: Ինչու որ ասում է սուրբ գիրքը թէ՝ «ամենայն մարմին խոտի պէս է»: Եւ մարդոց ամենայն փառքը խոտի ծաղկի է նման: Յամաքեց խոտն ու թափուեց ծաղիկը: Բայց Տիրոջ խօսքը մնում է յաւիտեան:

Հարուստները շինում են պալատներ, և այնպէս են իմանում թէ՝ հարիւրաւոր տարիներ էլ որ անց կենան, իրանց մեծ ու գեղեցիկ շէնքն անվնաս կանգուն կմնար, թագաւորները հաստատում են արքայական աթոռներ, ու իրանց մոռումն ասում են թէ՝ հազարաւոր տարիներ կտեւի: Բայց ո՞ր են այժմ ամբարտաւանութեան այն պալատներն, որ մարդկային մի քանի հասակներից առաջ փայլում էին իրանց փառաւոր տեսքով: Ո՞ր են այն ահագին թագաւորութիւններն, որ աշխարհակալների մեծամտութիւնը՝ կամ օրէնսդիրների խելքը ստեղծել էր:

| Զկան:

— Տեսնում ես, ինչպէս ամեն բան փոխուել է:

Նրբոր աչքս քցում եմ ու մտիկ տալի մեզանից առաջ եղած

մորդոց ու մեր պապերի Նշանաւոր գործերի վրայ՝ տեսնում եմ, որ այն ժամանակ ինչպէս փռուած էր նրանց փառաւոր անուէն, ինչպէս շատ տեղ նրանց գովեստներն էին խօսոււմ, Խոնջ եղաւ նրանց փառքն, նրանց մեծ մեծ գործերն ու մեծ անուէն, Խոնջ շահ բերին հերոսների գիւցազնական գործերը, կամ աշխարհակալների մեծամեծ յաղթութիւնները, նրանք վրդովեցին իրանց ժամանակակիցների խաղաղութիւնն ու հանգստութիւնը և ժառանգեցին իրանց յետագաների արհամարհանքն ու ատելութիւնն, Խոնջ նշանակութիւն, ի՞նչ օգուտ ունեցան յուշարձաններն, որ մահկանայնու մարդոց սնափառութիւնն և ունայնասիրութիւնն իրանց համար կանգնեցրին, ժամանակի դաժան օգերի ազդեցութեանն ենթարկուելով, քանդուել, փշոցել են, հողի մէջ են թաղուել, ակքանների են չորս կողմը պատած:

Ո՞ւր է ամբարտաւան, հարիւր դռներով ու աշտարակներով շրջապատուած Բաբելոնն: Երկար ժամանակ իշխեց նա հեռաւոր արեւելքի վրայ, և ահ ու սարսափ էր քցում թագաւորների, նրանց գահերի ու հպատակների վրայ: ձանադարհորդները յիւստի էլ տեսնում են մի անմարդաբնակ՝ ամայացած անապատացած դաշտի մէջ մի քանի տկուր փլատակներ՝ ու նրանց վրայ կաած է շատ հին զօրաւոր քաղաքի անուէն: — Ո՞ւր են Տիւրոսն ու Սիդոնն, որոնց վաճառատների մէջ մի ժամանակ աշխարհիս հեռաւոր երկրների ամենայն հարստութիւնն էր հաւաքուած, գիղուած: — Էլ սրտեղ է փայլում փառաւոր Նինուէ քաղաքն, որ երբեմն Աստուծոյ մեծ քաղաք էր ասուում, որոյ շրջապատն երեք օրուայ մէջ հազիւ կարելի էր պտտել, նրա բնակիչներին խնայեց Աստուած, որ Յոսիան մարգարէի քարոզից ազդուած, ապաշխարեցին, թագաւորն էլ իւր ամբողջ իջաւ, ծիրանին հանեց վրայից ու մի քուլձի մէջ փաթաթուեց, Բայց Նինուէի փառաւորութիւնը յաւիտեան չպիտի աւելի: Այսօր էլ փորում են Տիգրիս գետի մօտ՝ ու հողի տակից հանում փլատակների բեկորներ այն տեղից, ուր որ մի ժամանակ այդ քաղաքը բարձրադլուխ պարծենալով փայլում էր: — Երուսաղէմն էլ փրած ու փոխուած է: Էլ այն տեղումն ոչ մի մարդ չէ

կարողանում ճանաչել Դաւթի քաղաքն ու Սողոմոնի մեծութիւնը, Սողոմոնի, որոյ ոտքի տակ Արաբեան թափում էր իւր գանձերն, — Եգիպտոսի իմաստութիւնն էլ կորաւ, Փարաւոնների իշխանութիւնն էլ մոռացուեց, Երկիրը ծածկուած է անհետացած տաճարների ու գերեզմանների բեկորներով, որոնց վրայ գրուածներն մարդ հազիւ է կարողանում կարդալ: Աշխարհիս անծանօթ երկրներից եկած ազգեր նորա վրայ գնացին, յարձակուեցան՝ աւերող, քանդող, փշացնող մի հեղեղի նման: — Այժմն էլ թիւ է, որ գիտէ Պարսկաստանի զօրութիւնը. Պարսկաստանի, որ մի ժամանակ ամբողջ Առիայի կէտն իւր իշխանութեան տակն էր քցել: Ո՛չ՝ շատ զօրաւոր Կիւրոսի քաջութիւնն և ոչ նրա քաղաքագիտութիւնը կարողացաւ իւր կատարած գործն երկարատեւ անել. այս օրուան օրս երկիրը բաժան բաժան, կտոր կտոր է եղել. պատերազմներից յետոյ՝ կիսով չափ անմարդաբնակ է դարձել և աւար այլ և այլ ցեղերի և իշխողների: — Թէև մինչև այսօրս էլ գտնում են, երկինք հանում Յուդաստանի իմաստութիւնն ու ճարտարութիւնները, բայց մարդկային յիշողութեան մէջ է դեռ ապրում: Մի ժամանակ ծաղկած երկիրը, մի ժամանակ սաստիկ ատելի, արհամարհուած՝ բարբարոսների աւար է դարձել: Ուր որ Պօղոս Առաքեալը մի ժամանակ Աթենքի փողոցներում անծանօթ Աստուած էր քարոզում, որին որ սեղան էին կանգնել, ուր որ երբեմն անթիւ հոյակապ պալատների ու տաճարների մէջ երկրաւոր մեծութեան կայանն էր. ուր որ հրբեմն իբրեւ ուխտ էին գնում ամեն երկիրներից ուսումնասիրներն, որ իրանց գիտութիւններն աւելացնեն, իրանց բարքն ամբընն ու նուրբ քաղաքավարութիւն սորվեն՝ ճանապարհորդն այսօր տեսնում է առաջուայ ժամանակից մնացած վերջին բեկորների մէջ մի բոլորովին ուրիշ, նոր առաջ եկած քաղաք: — Կորընթոսը, միլիոնների տէրը, մեծ զեղիութեան ու փափկասիրութեան քաղաքն, որոյ մէջ շատ վաղուց Պօղոս Առաքեալի շուրջը հաւաքուել էին քրիստոնեայ ժողովրդի մի խումբ՝ շատոնց կրակի ալիքների աւար էր դարձել: Մի երկրաշարժ հէնց այս դարուս մէջ կուլ տուեց վերջին աղքատիկ բնակարաններն:

ինչպէս զօրաւոր էր Հռովմ քաղաքն, աշխարհիս վրայ իշխողը՝ մեր Փրկչի ծնունելու օրերումն։ Աշխարհիս ծանօթ երկիրներն այն օրերումը հարկ էին տալի կայսեր. ամբողջ արեւելեան երկրների մի մեծ մասն, Ափրիկայի հիւսիսային պտղաբեր ասիերն և գրեթէ մեր մնակուած (Նւրուպայ) ամբողջ աշխարհս իւր թագաւորական գաւազանի իշխանութեան տակն էր։ Ո՛ւր է այժմ Հռովմայ կայսերութեան մեծագոր իշխանութիւնն։ Արդէն հաւար հինգ հարիւր տարուց աւելի է, որ չկայ աշխարհիս երեսումը։ Հռովմի պետութիւնը կործանուելուց յետոյ՝ երկիրներ նսւաճողներ որքան են եկել գնացել. որքան թագաւորութիւններ են հաստատուել ու էլի քանդուել։ Այդպէս էլ պէտք էր լինէր, ինչու որ ամենայն մարմին խոտի է նման՝ և մարդուս պմնայն փառքը՝ խոտի ծաղկի պէս. խոտը ցամաքում է, ու ծաղիկը թափւում։ ամենայն երկրաւոր բան ոչինչ է. միայն անմահ հոգին և Աստուծոյ սէրը չեն հնանում։

Հազարաւոր սերունդներ են ճնակուել և ապրել այդ տեղում, ուր որ այժմ դու և քո կեանքի ընկերներն ու ժամանակակիցներն էք բնակվում և ապրում։ Հազարաւոր սերունդներ թէ՛ հասարակ, անանուն, և թէ՛ նշանաւոր ու անուանի մարդիկ՝ քեզանից առաջ եկել են այն կտոր երկրի վրայ բնակուել, որ դու այժմ քո հայրենիքդ ես անուանում։ Ի՞նչ եղան այն մարդիկն, որ քեզանից շատ առաջ այդ տեղ ման էին գալիս ամեն կողմն։ Ի՞նչ դուրս եկաւ նրանց արած գործերից, որ այնչափ հոգացողութիւնով ու խնամքով, չլքանող սրտով ու տրտմութիւնով կատարեցին։ Նրանց մտածած ու գլուխ բերած գործն, յաջողած ժամանակը՝ կարժէր արդեօք, որ իրանց անչափ ուրախացնէր։ Կամ իրանց կարծած քանի քանի անգամ ունեցած անբաղդութեան վրայ կարժէր արդեօք, որ անչափ արտասուք թափէին։ — Տես՝ որտեղ որ ոտդ դնում ես, փոշի էրարձրանում, որ մի ժամանակ քո պապերի, կամ քեզանից առաջ աշխարհումս եղած, կեանք ունեցած ու ապրած մարդոց մարմնի ամենամանր կոտորներն են ու իրանց մարմնի սեպհակաւութիւնն։ Ինչու որ մինչև անգամ նրանց ամուր օսկորները փառել են ու երկրիս վրայ գէս ու գէն ցրուել, ուրիշ մարմիններ

են դարձել ու նոր, օտար կեանքի հետ կապուել:

Առաջուան ժամանակի ու մարդոց վերայ մի այլ քննելու, նայելու ու հասկանալու, թէ ինչպէս է հին ժամանակն իր գործերի հետ մի երազի նման անհետացել, — այսպէս մտիկ տալու ու հասկանալու, որ փոշուց գոյացած ամեն բան անցաւոր է՝ սորվեցնի քեզ ետեւից ընկնել ու պոռել ան, ինչ որ միակ մնացաւանն է: Ինչու որ դու էլ քո ցաւերովդ, ուրախութիւններովդ ու վայելչութիւններովդ պէտք է անց կենաս գնաս, վերջանաս, միռնես: Ըրը կգայ որ քո ոսկորներիցդ ամենալիզքի՜ մասն էլ անգամ չի գտնուիլ, ինչու որ այն մարմինն, որին որ դու այսօր դեռ ինամք ես տանում, վաղուց արդէն վերադարձած կլինի ընդթեան շտեմարանները: Կգայ օրն, որ աշխարհիս երեսին ապրող ոչ մի մարդ չի գտնուիլ, որ քեզ ճանաչած՝ կամ քո մասին գնէ լսած լինի, ինչու որ, ոչ ոք քո անունդ տուող, քեզ յիշող չի լինիլ: ու ոչ ոք չիմանալ, որ դու մի ժամանակ աշխարհ ծնած ես ու նորա մէջն ապրել ես:

Մի դողար, ով անմահ հոգով ստեղծուած, այդպիսի բաներ միտք անելով, ինչու որ դու ապրում ես և պիտի ապրես: Յիշուածն է, որ ասում է թէ՝ «մի վախենար այն բանից, որ մարմինդ միայն կարող է սպանել: բայց վախեցիր, այն, այն բանից, ինչ որ հոգիդ է սպանում»: Այս ժամանակաւոր, անցաւոր և ապականացու աշխարհիցս բարձր ու գերազանց մի նպատակ է մեզ սպասում, մի աներկեւան ափ պէտք է հասնենք, դուրս գանք ու հանգստութիւն գտնենք մեզ անհանգիստ անող ծովային անհանգիստ ճանապարհորդութիւնից յետոյ:

Առաջուան աշխարհի, մարդոց ու նրանց գործերի վրայ միայն ու հասկանալու, որ երկրաւորն ընդհանրապէս անցաւոր է, ոչ թէ յիրող պէտք է կոտորի ու քեզ թուլացնի, այլ պէտք է թեւ զերանի, նարգի, բարչրայի հոգով: Մտիկ տուր առաջուայ ժամանակի ու մարդոց գործերի վրայ՝ ու էլ այնչափ չես սարսափիլ այս օրուայ օրս պատահած բաներից: Մարդիկ, մինչև անգամ նրանցից ամենազօրաւորներն էլ չեն հասնում այն բանին, ինչ որ ուզում են: Այն չար բանն, որ նրանք մտքներումը դրել էին անել, Աստուծոյ ձեռքումը բարի և օգտակար բանի

է փոխուում: Ինչ որ վտանգաւոր է իր համարում, կարելի է որ առաջին օրհնարներ աղբիւրն է. ինչ որ քեզ համար մահաբեր թոյն էր երեւում, կարելի է առողջարար դեղ էր: Ազգերի ոտքերին շղթայ են քցել, որ նրանց հասուցանեն ազատութեան համար. հալածել են իմաստուններին, որ նորանց վարդապետութիւնն աւելի ևս տարածուի. սպանել են առաքելի մարդոց, որ նրանց մահուան օրինակովն ուրիշներն ոգևորուին:— Ինչու որ մարդկային ազգի ունեցած վիճակնորի, կամ նրանց գլխին եկածների մէջ աստուածային կարգադրութիւնն այս է, որ մարդիկ շատ անգամ չարիք են ուզում անել, բայց չար բանն երբէք գլուխ բերել չեն կարողանում: Աստուած արգելք է դնում:

Բայց երկրաւոր բանի անցաւոր լինելու վրայ մտիկ տալն ու հոսկանալն, որ այսօր կայ, վաղը չկայ՝ մեզ խնարհ լինել էլ է սուղեցնում. և ի՞նչ են որ՝ մեր գերազանցութիւններն, որոնց վրայ հպարտանում ենք. կամ պարծենում: Մի դողար, ծաղկահասակ վայելագեղ օրհորդ, որ դեմքիդ գեղեցկութիւնը կորչում է, ինչու որ հաբէ է և պէտք է թառամի: Մի պարծենար ուժիդ վրայ, ով երիտասարդ, մի քանի տարիներից յետոյ քո դադրած ձեռքդ պէտք է փայտի կարօտի, որ վրան յենա: Մի ուրախանար, հպարտանալով քո հարստութեանդ վրայ, այ մեծատուն, մի քանի տարուց յետոյ անշուշտ ուրիշի ձեռքումը կլինի: Մեծ բան մի՛ համարիլ այսօրուան ունեցած իշխանութիւնդ, ով իշխանաւոր, շատ չի անց կենալ, ուրիշը քո տեղդ կնստի, ուրիշը կբռնի այսօր քո ձեռքդ ունեցած իշխանութեան գաւազանն, և գուցէ աւելի լաւ կերպով կվարի իւր իշխանութիւնն: Անմխիթար լաց մի՛ լինիր ու հոգս մի՛ անիր այ անբաղդացած մարդ, որ ունեցած չունեցածիդ մեծ մասը ձեռքիդ գնաց, գրէթէ աղքատացար ու չոր քարի վրայ նստեցիր: Աստուծոյ մի բարերարութիւնն էր, որ շատ կորուստ ունեցար ու մեծ վնաս քաշեցիր: Ումին որ խրատուամէ տէրը, նորան սիրում է: Մի դողար կեանքի վտանգներից, որ կարող են պատահել քեզ ժամանակի փոթորիկների միջոցում. եթէ ամենավատ բանն էլ քեզ պատահի, այն է՝ որ մահդ ապուրջ պէտք

դէպքի, յայն: Մեռնելդ կայ ու կայ, եթէ որ ժամանակի փոթո-
րիկներէ չըհանդիպես էլ:

Վերջը վերջը հարկ է և պէտք է բանն այն տեղ գայ, որ մենք
անկախ լինինք մի անձնասէր կեանքի հրապոյրներէց, և զօրա-
նանք այն վսեմ՝ անձնուրացութիւնով, որոյ օրինակն էր մեզ
համար մեր Փրկիչը, Միայն նա է քրիստոնեայ, ով որ երկ-
րուոր բարիքն աւելի ուրիշների համար ունի, քան թէ իւր
անձի համար՝ և ով որ Աստուածանից գոհ սրտով գործ է
ածում, բայց ինքն իւր ունեցածի ծառան չէ: Ի՞նչ պիտի վա-
խենայ նա, ով որ ինքը մեղաւոր չեղած տեղը՝ խայտառակուե-
լուց ամուշելու բան չունի, աղքատանալու մէջ մի թշուառու-
թիւն չի տեսնում իւր համար, իւր մահը մի անբաղդութիւն
չէ համարում: այլ այս ամեն բանի մէջ տեսնում է միայն աս-
տուածային կամք, մեր փրկութեան ու երջանկութեան
համար:

Այո, աշխարհիս ամեն բաների մեծ և ընդհանուր անցաւո-
րութեան րոպէն իմ սիրտս ամենևին չպիտի թուլացնի կամ
կոտորի, այլ իմ միտքս ու հոգիս կըարձրացնի դէպի իւր իսկական
անկախութիւնն ու բնածին արժանաւորութիւնն: Կեանքիս փո-
թորիկների, փորձանքների մէջ, իմ սրտիս քաջութիւնը ցոյց
կտամ, որով ոյժ և զօրութիւն ունիմ անբաղդութիւնից չը-
յաղթուելու: Բայց իմ զօրութիւնս, իմ իսկապէս յաւիտենա-
կան լինելուս բացայայտ գիտակցութիւնն է: Իմ զօրութիւնս՝
մաքուր, առաքինի, բարեսէր հոգուս գիտակցութիւնն է: Ին-
չու որ, անմեղութիւնը մի վահան է ձախորդութիւնների, փոր-
ձանքների դէմ, և ուղեցոյց սուրբ յաղթանակներ տանելու:
Իմ զօրութիւնս այն գիտակցութիւնն է, որ Դու ամենակարող
Պատճառդ իմ գոյութեանս ու կեանքիս, Տնօրինողդ իմ գըլ-
խիս գալու բաների՝ յաւիտենական Սէր ես ու իմ Հայրս:
Եւ եթէ դու՝ իմ ստեղծող Աստուածս՝ իմ կողմս ես, ճիշդ կա-
րող է իմ դէմն լինել:

Այս զօրութիւնս, այս ոյժս ստացել եմ իմ Փրկչիցս, որ իւր
խօսքովն ինձ լուսաւորեց ու երջանկացրեց. որ իմ Արարչիս,
իմ Աստուծուս ինձ յայտնեց իւր անանցանելի սիրովն. որ ինձ

միջոց տուեց այս կեանքին խաւարից աչքս քցելու յաւիտեան-
կան կեանքի սրբութիւն սրբոցի վերայ, որ ինձ իւր վարդապետ
տութեամբ մեղքերից ազատելով, տարաւ, բարձրացրեց, հաս-
ցրեց իսկական ազատութեան, իսկական հոգեւոր կեանք ունե-
նալու: Յիսուսի Քրիստոսի՝ իմ Փրկչի շնորհովն ու օգնութիւ-
նով ամեն բանի մէջ զօրաւոր եմ, ինչպէս որ Տէրաւ Իօսէփ
որեան կ'ապրէ: Ամէն:

Գ. Ե. ԱՂՈՓԻՐԵԱՆՑ.

ՀԱՄԱՆԳՂԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ:

Անցեալ ամառ Լոնդոնում տեղի ունեցաւ համադղիական եկեղեցական
ժողովը (էրրորդը), որ կոչվում է Լամբէտեան, որովհետեւ Լոնդոնի Արքե-
պիսկոպոսի պալատը գտնւում է Լամբէտ թաղում: Յայտնի է որ Անգ-
լիական — եպիսկոպոսական եկեղեցու հետեւողները բազմաթիւ են աշխար-
հիս ամեն մասերում և ամեն ուրեք կան վիճակաւոր եպիսկոպոսներ, որոնք
հովոււմեն իրանց հօտերը գրեթէ անկախ, թէև բարոյապէս ճանաչում են
բուն անգլիական եկեղեցին իբրև իրանց մայր: Անգլիական եպիսկոպոսա-
կան եկեղեցու հովիւք տեսնելով, որ իրանց անջատեալ գիրքը թուլացնում
է եկեղեցու յոգը պատերազմելու համար ծագող նոր մոլար վարդապետու-
թեանց և ժողովրդոց մէջ արմատացող չարեաց դէմ, որոշեցին տասն
տարին միանգամ ընդհանուր ժողով կազմել և միացեալ ուժերով որոնել և
գտնել այն միջոցներն, որոնց գործադրութեամբ կարողանայ անգլիական
եկեղեցին ամենուրեք թէ մոլար վարդապետութեանց և թէ ժողովրդոց մէջ
արմատացած և արմատացող հասարակական և կրօնական — բարոյական չա-
րեաց առաջն առնել և իւր հօտի մէջ հաստատուն պահել եկեղեցու վար-
դապետութիւնն ու քրիստոնէական բարոյականութիւնը: Առաջին ժողովը
տեղի ունեցաւ 1867 թուականին և անցեալ տարի եղաւ երրորդ ժողովն,
որ կազմուած էր 150 եպիսկոպոսներից, որոնք գումարուել էին Լոնդոնում
բուն Անգլիայի վիճակներից, Ամերիկայի այլ և այլ պետութիւններից,
Ասիոյ, Աֆրիկայի, ու Աւստրալիայի զանազան նահանգներից, ինչպէս և
Ովկիանական կղզիներից: Այս ժողովի որոշման և նշանակութեան Ռուսաց